VII ԴԱՐԻ «ԱՇԽԱՐՀԱՑՈՒՅՑԻ» ՄԱՍԻՆ

Մ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Աշխարհացույցը» իր ժամանակի քարտեզագրական ու աշխարհագրական դիտելիքների կոմպլեքս է, որի քարտեզը ժամանակի ընթացքում, ինչպես նկատել է ակադեմիկոս Ս. Երեմյանը, անհայտացել է, ճիշտ այնպես, ինչպես ոչնչացել են ու չեն հասել մինչև մեր օրերը աշխարհագրության հիմնադիր Էրատոսթենեսի ու Պտղոմեոսի քարտեզները և Ռուսաստանի XVII դարի Մեծ Գծագիրը։ Սակայն մնացել է Աշխարհացույցի տեքստային նկարագրությունը, որը կազմված է եղել այդ քարտեզի հիման վրա, նրա բովանդակությամբ, աշխարհագրական ուսումնասիրությունների և դուցե ուսուցման նպատակներով[1]։

Աշխարհացույցի հեղինակը առաջին իսկ էջում խոսում է աշխարհի քարտեզը կազմելու եղանակների մասին։ Նա գրում է. «Երկրագնդի չափումները հնարավոր են դարձել ճանապարհորդության և նավադնացության շնորհիվ»[2]։ Այս սեղմ նախադասությամբ հայտնված է այն իրողությունը, որ ուղեծրային տիպի քարտեզները լայն տարածում էին գտել այդ ժամանակ և կազմվում էին «ճանապարհորդության» միջոցով։ Այդ բառի տակ պետք է հասկանալ աշխարհագրական այնպիսի չափումներ, որոնք կատարվում էին հատուկ խմբերի կողմից և որոշում խոշոր մայրուղիների վրա գտնվող կայանների, քաղաքների ու այլ մանրամասների հեռավորությունները միմյանցից։ Որպես սկզբնաղբյուր Աշխարհացույցի հեղինակը մատնանշել է բացառապես քարտեզագրական աշխատություններ[3]. դա ևս հիմք է տալիս պնդելու, որ Աշխարհացույցը քարտեզ է եղել։

Աշխարհացույցի ներածական մասում տրված են նաև քարտեզ կազմելու մաթեմատիկական հիմունքները՝ երկրագնդի մեծությունը, տերիտորիաների աշխարհագրական տեղադիրքերը, զուգահեռականներն ու միջօրեականները, նրանց մեկ աստիճանին համապատասխանող գծային երկարությունը, ինչպես նաև հայկական, պարսկական ու հռոմեական երկարության չափի միավորները։ Աշխարհացույցում տրված են ցամաքամասերի, ծովերի ու կղզիների մակերեսները քարտեզագրական մանրամասնությամբ՝ նրանց ձգվածությունը աստիճաններով և աշխարհի բնակեցված մասի տարածումը լայնությամբ ու երկայնությամբ։ Բացի այդ, Աշխարհացույցը հիշատակում է քարտեզագրական գործիքներ (աստրողաբոն, ժամտղիտականն ու սկիթոոն), որոնց միջոցով ժամանակին աշխարհագրական քարտեզներ կազմելիս կատարվել են չափումները։

---

1 Աշխարհացույցի՝ քարտեզ լինելու մասին սոային անգամ արտահայտվել է Յոզեֆ Մարկվարտը. տե՛ս նրա Eranšahr nach der Geographie des Ps. Moses Khorenaci (Berlin, 1901) աշխատությունը։

2 «Армянская география VII века», издал К. П. Патканов, СПб. 1877, հայերեն տեքստ. էջ 1։

3 Աշխարհացույցի հեղինակը, իր մատնանշումի համաձայն, օգտագործել է Պապպոս Ալեքսանդրացու, Կոստանդին Անտիոքացու և Կոստաոիցի աշխատությունները։

Աշխարհացույցի հեղինակը օվկիանոսի տարածման սահմանների մասին գրել է. «Ովկիանոս դառնայ ընդ հիւսիսի յարևելս մինչև ի վաթսուն մասն երկայնութիւն, որ է հանդէպ Կարկինիտեան ծոցին Պոնտոսի առ Քեռսոնիս»[4]։ Այսպիսի մանրամասն նկարագրությունը կարող էր տրվել միայն քարտեզի առկայության դեպքում, նրա անմիջական դիտումների հիման վրա։

Պետք է նկատի ունենալ, որ հին դարերում աշխարհագրությունը հասկացվել է որպես ամբողջ աշխարհի մանրամասն գծագիրը՝ քարտեզը։ Նրա իմաստը այդպես է ընկալել առաջին աշխարհագետ էրատոսթենեսը։ Անաքսիմանդրը և Հեկաթեոսը, որոնք զբաղվել են աշխարհագրությամբ, առաջին հերթին կազմել են ամբողջ աշխարհի քարտեզը։ Պտղոմեոսը նախօրոք կազմած քարտեզի հիման վրա է շարադրել իր «Աշխարհագրական ձեռնարկը»։ «Աշխարհագրությունը,— գրել է Պտղոմեոսը,— ներկայումս բոլորին հայտնի ամբողջ աշխարհի գծագիր պատկերն է, որը ներկայացնում է հատկապես նրան (աշխարհին) վերաբերող բոլոր մանրամասները։ Այդ (գծագիրը) հնարավորություն է ընձեռում դիտելու ամբողջ աշխարհը մեկ նկարի վրա ճիշտ այնպես, ինչպես կարող ենք դիտել անմիջականորեն ամբողջ երկինքը, նրա աստղային համակարգությունների հետ համատեղ մեր գլխավերևում, պտույտի ընթացքում»[5]։ Այս, ինչպես և էրատոսթենեսի բնորոշումը, թե՝ «աշխարհագրությունը ամբողջ աշխարհի գրաֆիկ պատկերումն է» հաստատում են, որ հին ժամանակներում աշխարհագրությունը հասկացվել է որպես երկրագնդի գծային պատկեր՝ քարտեզ։ Պետք է նկատի ունենալ նաև, որ «գեոգրաֆիա» տերմինը հնում նշանակում էր երկրագնդի պատկեր[6]։ Անտիկ շրջանում և նրանից հետո, մինչև միջին դարերը, աշխարհագրությունից տարբերել են խորոգրաֆիան (Χωρογραφια οικουμενης), որը «ոչ մի կարիք չունի մաթեմատիկական եղանակների — գրել է Պտղոմեոսը — և երկրագրության կարևոր գործոնն է. խորոգրաֆիայի նպատակն է տալ առանձին երկրամասի (բնաշխարհի) մանրամասն նկարագրությունը»[7]։

Աշխարհացույցի հեղինակը իր քարտեզի մաթեմատիկական տարրերն ու նրան վերաբերող այլ կարևոր մանրամասներ շարադրելուց հետո, նախքան բնաշխարհներ նկարագրելը, նշում է, որ այժմ ձեռնարկելու է նկարագրության՝ «աշխարհ առ աշխարհ առանձին, ըստ Պապպոս Ալեքսանդրացու տեղագրական նկարագրության»[8]։ Աշխարհացույցի հեղինակի այս բացատրությունից երևում է, որ սխալվում են այն ուսումնասիրողները, որոնք կարծում են, թե Աշխարհացույցը տարբեր երկրների քարտեզների հավաքածու է[9]։ Աշխարհացույցը միայն աշխարհի քարտեզ է ունեցել, իսկ բնաշխարհները տրված են տեքստով։ Աշխարհացույցի հեղինակը քարտեզագրական հասկացողություններ շարադրելիս ունեցել է իր կազմած աշխարհի քարտեզը, մինչդեռ բնաշխարհների (սֆրագիդներ՝ ըստ էրատոսթենեսի) նկարագրության համար օգտագործել է

---

4 «Армянская география VII века», էջ 5։

5 Տե՛ս Ю. Кулаковский, Карта Европейской Сарматии по Птоломею, Киев, 1899, էջ 9։

6 Տե՛ս И. Ю. Крачковский, Избранные сочинения, 1957, т. IV, էջ 79։

7 Клавдий Птолемей, Руководство по географии, перевод К. Апта, «Античная География», 14, 1953, էջ 288։

8 «Армянская география VII века», էջ 7։

9 Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 12։


Географія
Іорнанда
и
Моисея Хоренскаго
Géographie
de
Jornandes
et
Moyse de Khorenne
Année de l'Ere Chrétienne 550.
Гуннигуры Hunnigurs
Сирдифенки
Sirdifensis
Понтъ Евксинскій
Pont-Euxin

Պապպոս Ալեքսանդրացու Խորոգրաֆիտ աշխատությունը, որ քարտեզներ չի ունեցել։

Եվրոպայի բնաշխարհների նկարագրության սկզբում Աշխարհացույցի հեղինակը զգուշացնում է, որ մի կողմ է թողնում այն բոլորը, ինչ վերաբերում է թվերին, չափումներին և այդ կարգի այլ մանրամասնություններին. «Եւ արդ որովհետև բովանդակեցաք զհասարակախոսութիւն, այսուհետև սկսցուք պատմել աշխարհ աշխարհ առանձինն ըստ գրիցն տեղագրութեանց Պապայ Աղեքսանդրացւոյ», և ապա շարունակում՝ «թողլով ի բաց զթիւս և զչափս և զմանրամասնաբար պատմութիւնս»[10]։ Այդ նշանակում է, որ նա մտադրություն չունի առանձին բնաշխարհների մասին քարտեզագրական տվյալներ հաղորդել, որովհետև առանձին բնաշխարհների համար քարտեզներ չի կազմել։ Այս հանգամանքը ևս վկայում է, որ հետևելով քարտեզագրական ավանդական սովորությանը, նախքան տեքստի շարադրումը նա սկզբում կազմել է ամբողջ աշխարհի քարտեզը (որը մեզ չի հասել), իսկ առանձին բնաշխարհների (սֆրագիդների) համար քարտեզներ չի կազմել։

Հայ քարտեզագետը, հասկանալի պատճառներով, առանձնակի ուշադրությամբ է շարադրել Հայաստանի, Վրաստանի, Աղվանքի և Պարսկաստանի բնաշխարհների բազմաթիվ մանրամասները։ Հայրենի երկրի մասին բազմակողմանի ու մանրակրկիտ տեղեկություններ հաղորդելու համար նա անհրաժեշտ է համարել «պտրտել գրքերում և լրացուցիչ աշխատանք կատարել քարտեզների վրա»[11]։ Եթե Աշխարհացույցի հեղինակը նախօրոք կազմած ունենար բոլոր սֆրագիդների ու երկրամասերի առանձին քարտեզները, ապա հավաքած կլիներ աշխարհագրական ու քարտեզագրական անհրաժեշտ բոլոր տեղեկություններն ու տվյալները, հետևապես տեքստը շարադրելիս կարիք չէր զգա լրացուցիչ նյութեր հավաքելու և առհասարակ որևէ լրացուցիչ աշխատանք կատարելու գրքերի ու քարտեզների վրա։

Աշխարհացույցի՝ աշխարհի քարտեզ լինելը հաստատվում է նաև մի այլ փաստով։ Գոյություն ունի քարտեզի մի էսքիզ[12], որը կազմված է 1810 թ.։ Դրա ֆրանսիացի հեղինակի բացատրությամբ այդ քարտեզը վերծանված է VII դարի Աշխարհացույցի նկարագրական տեքստի հիման վրա։ Քարտեզի բնագիրն ու բացատրագիրը թարգմանվել ու հրատարակվել են նաև Պետերբուրգում 1823 թ. ռուսերեն։ Նկատի ունենալով, որ մինչև XIX դարի վերջերը Աշխարհացույցը վերագրվել է Մովսես Խորենացուն, ֆրանսիացի քարտեզագետը Աշխարհացույցի հեղինակ է համարել Մովսես Խորենացուն։

Որ մեզ հասած Աշխարհացույցը շարադրված է քարտեզի հիման վրա, ապացուցվում է մի շարք փաստերով։ Աշխարհացույցում գրված է, որ «օվկիանոսը սկսվում է հողմ զեփյուր երկրից՝ Թեոքիմաց լեռան մոտից, որի վրայով տարված է 21° երկայնության միջօրեականը»[13]։ Այդ նկարագրությունը լրացված է այսպիսի մանրամասնությամբ՝ «օվկիանոսը տարածվում է դեպի հյուսիս-արևելք՝ մինչև 60° երկայնություններ»[14]։ Քարտեզագրական այդպիսի ճշգրիտ

[10] «Армянская география VII века», էջ 7, 8։
[11] Նույն տեղում, էջ 17։
[12] Տե՛ս Jean Potocki, Geographie de Iornandes et Moyese de Khorenne Annes de l'Ere Chrestienne 550.
[13] «Армянская география VII века», էջ 5։
[14] Նույն տեղում։

նկարագրության համար հեղինակը պետք է որ ունեցած լինի մանրամասն քարտեզ, որովհետև առանց նախօրոք պատրաստված քարտեզի անհնար է երկիրը բաժանել յոթ նահանգների (կլիմայական զոտիների), գծագրել զուգահեռականները և նշել կլիմաների ընդգրկած բնակավայրերն ու այլ մանրամասներ, նկարագրել օվկիանոսի սահմանները, առավել ևս՝ ցամաքի տեղադիրքը միջօրեականի նկատմամբ։ Սակայն բոլոր վիճակները վկայում են, որ Աշխարհացույցի հեղինակը չի օգտվել Պտղոմեոսի, Կոստառիցի, Ագաթագեմոնի և Պապպոս Ալեքսանդրացու քարտեզներից։

Աշխարհացույցի աշխարհագրական նկարագրությունները, որտեղ հատկապես շեշտված են առանձին երկրամասերի ու օվկիանոսների սահմանները ու տեղադիրքերը, մեծ մասամբ շաղկապված են քարտեզի աշխարհագրական ցանցի՝ զուգահեռականների ու միջօրեականների հետ։ Այդ նկարագրությունները առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում, որովհետև պարզորոշում են Աշխարհացույց քարտեզի նաև պրոեկցիան։ Աշխարհացույցի հեղինակը երկրագնդի առանձին աշխարհամասերն ու ցամաքները քարտեզագրական այնպիսի մանրամասնությամբ է նկարագրել, որ դյուրությամբ կարելի է վերծանել նրա քարտեզը և դաղափար կազմել այդ քարտեզի պրոեկցիայի մասին։

Պտղոմեոսը ժամանակին ասել է, որ աշխարհի քարտեզը պետք է կազմել սֆերիկ, այսինքն Մարինոսի վերափոխված պրոեկցիայով, որի և՛ միջօրեականները, և՛ զուգահեռականները լինելու են կոր գծեր, որովհետև հասարակ կոնային պրոեկցիայով կազմված աշխարհի քարտեզը լրիվ կերպով չի կարող ընդգծել երկրագնդի կորընթարդ տեսքը։

Աշխարհացույցի տեքստի մանրակրկիտ ուսումնասիրությունը հաստատում է, որ նրա հեղինակը աշխարհի քարտեզի պրոեկցիայի համար չի օգտագործել ինչպես Էրատոսթենեսի՝ միմյանց փոխադարձաբար ուղղահայաց գծերից բաղկացած աստիճանացանցը, այնպես էլ Պտղոմեոսի հասարակ կոնային պրոեկցիան։ Բնաշխարհների նկարագրությունների և քարտեզագրական ցանցի նկատմամբ նրանց փոխադարձ դասավորության ուսումնասիրությունից աներկբայորեն հետևում է, որ Աշխարհացույցի պրոեկցիան եղել է կեղծ կոնայինը, որի քարտեզի և՛ միջօրեականները, և՛ զուգահեռականները կորագիծ են։ Այսպես, Աշխարհացույցի տեքստում նշվում է, որ քարտեզի վրա «Իսպանիան ունի եռանկյան տեսք», որ Բրիտանական աշխարհի «արևմտյան մասում Իբերնիա անունը կրող կղզին ջնջված դարեհատի տեսք ունի», իսկ նրա «Ալվիոն մյուս կղզին, որ արևմտյանից ավելի մեծ է, տղրուկի տեսք ունի և ճյուղավոր է»[15]։ Քարտեզի վրա այդ տերիտորիաների նման տեսքը հատուկ է միայն կեղծ կոնային պրոեկցիային։

Քարտեզի մասնագիտական բնորոշ հատկանիշները, որոնք ընդգծում են նրա գիտական մակարդակը, հայտնի են եղել Աշխարհացույցի հեղինակին, այդ մասին նա գրել է. «Բոլոր երկարությունները ոչ թե երկրագնդի մակերևույթով կատարված անմիջական չափումներից են ստացված, այլ օդի միջով՝ համապատասխան գործիքներով դիտարկելու շնորհիվ (էջ 3)»։ Քարտեզագրության դասական այն եղանակները, որ մշակել ու կիրառել է երկրորդ դարի ա-

15 Նույն տեղում, էջ 8։

ՔԱՐՏԷՍ

ՊՏՂԱՄԷՈՍԻ



կանավոր գիտնական Պտղոմեոսը, պահպանվել ու հետագա զարգացում են ստացել միայն Աշխարհացույցի մեջ։

Հետևելով Էրատոսթենեսի սֆրագիզների տեսությանը, Աշխարհացույցի հեղինակը յուրաքանչյուր բնաշխարհ (սֆրագիզ) նկարագրել է իր աշխարհագրական դիրքով՝ սահմանների երկարությամբ ու լայնությամբ, նշելով ռելեֆը, ջրագրությունը և բնական ռեսուրսները, ինչպես նաև այնտեղ ապրող ժողովուրդները։ Այդ ամենի հիման վրա մեր վերականգնած Աշխարհացույց քարտեզի վրա միջօրեականներ ցույց են տրված այն քանակով և տեղադիրքով, որ գծված էին Էրատոսթենեսի քարտեզի վրա։

Քարտեզի ինքնուրույնությունը սովորաբար հաստատում են քարտեզագրական տարբերիչ հետևյալ հատկանիշները՝ քարտեզի պրոեկցիան, մանրամասների տեղադիրքի աշխարհագրական կոորդինատները, քարտեզագրական ցանցի խտությունը, տեսքն ու բովանդակությունը։ Մանրամասն ուսումնասիրությունը հաստատում է, որ այդ բոլոր հատկանիշները առկա են Աշխարհացույց քարտեզի վրա։

Հայաստանի և մերձակա երկրների աշխարհագրական այն նկարագրություններն ու տեղեկությունները, որոնք դրանցված են Աշխարհացույց քարտեզի վրա, քաղված են մեծ մասամբ հայ հեղինակների գործերից։ Մի շարք կղզիների նկարագրությունները, նրանց լայնության, երկարության, ինչպես և պարագծի վերաբերյալ տվյալները վերցված են Պտղոմեոսից, Պլինիուսից, Սարինոս Թիրացուց, Ստրաբոնից և ուրիշներից։ Աշխարհացույցի հեղինակը օգտագործել է Արիստոտելից մինչև Կողմաս Հնդկաչուի ժամանակաշրջանը եղած բոլոր գիտնականների տեղեկությունները՝ համապատասխան ընտրությամբ և սրբագրությամբ։ Մրգատեսակների տեգարաշխման բաղմաթիվ փաստեր ընդօրինակված են Հերոդոտոսից, իսկ հոտավետ նյութերինը՝ Ստրաբոնից։ Ստրաբոնից է քաղված սպիտակ հողի հատկության ու օգտագործման վերաբերյալ տեղեկությունը։ Մի շարք գետերի, լճերի ու այլ մանրամասների անունները քաղված են Փլավիուսից։ Չնայած որ Բաբելոնի և Արաբիայի աշխարհագրական նկարագրությունները տրված են Պտղոմեոսի աշխատություններում, սակայն Աշխարհացույցի հեղինակը դրանք չի օգտագործել։

Աշխարհացույցի տեքստի և Պտղոմեոսի քարտեզների համեմատությունը բերում է այն եզրակացության, որ դա ինքնուրույն աշխատություն է և որ քարտեզագրական հարցերում նրա հեղինակը հետևում է իր սեփական տեսակետներին։ Այդ հանգամանքը ակնհայտ դարձնելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել քարտեզագրական մի քանի սկզբունքների կիրառման ինքնուրույնությունը աշխարհացույցում։

Աշխարհի քարտեզը դասական քարտեզագրության բոլոր ներկայացուցիչները պատկերել են այսպես կոչվող նահանգների (կլիմաների) միջոցով, որոնք հետագայում տեղի տվեցին զուգահեռականներին։

Աշխարհագրական կոորդինատներ առաջին անգամ որոշել է Էվդոքս Կնիդացին, որը ընդունել է երկրի գնդաձևությունը։ Էվդոքսը, ինչպես նաև Հերոդոտոսը, Դեմոկրիտն ու Հիպոկրատը երկիրը բաժանել են երեք կլիմայի։ Արիստոտելը այս խնդրում պաշտպանել է Էվդոքսի տեսակետը։ Երկիրը գունդ է համարել նաև Դիկեարքոսը, որը նրա մակերևույթը բաժանել է երեք կլիմայի։ Աշխարհագրության հիմնադիր Էրատոսթենեսը երկիրը բաժանել է ութ կլիմագոտիների։ Հիպարքոսը երկիրը բաժանել է 14 կլիմայի, Պոսիդոնիոսը՝ 13 կլի-

մայի։ Աշխարհացույցի հեղինակը նպատակահարմար է գտել աշխարհը ներկայացնել միայն 7 նահանգների (կլիմաների) միջոցով[16]։ Նրա նախընտրած այդ սիստեմը չի համընկնում ինչպես էրատոսթենեսի, նույնպես և Պտղոմեոսի և այլոց քարտեզների աշխարհագրական ցանցի հետ։ Այսպես, եթե Դենպրի գետաբերանի վրայով էրատոսթենեսը գծել է 48° 35′ ութերորդ նահանգը (ամառվա ամենաերկար օրվա 16 ժամ տևողություն ունեցող տերիտորիաների համար), իսկ Պտղոմեոսը այդ կլիման գծել է տասնհինգերորդ զուգահեռականով՝ Բորիսֆեն անվամբ (14 ժամ 30 րոպե տևողությամբ), ապա Աշխարհացույցը այն տվել է որպես յոթերորդ նահանգ (15 ժամ 30 րոպե տևողությամբ) Սկիթիա անունով։ Դա նշանակում է, որ Աշխարհացույցի քարտեզագրական ցանցը տարբերվում է իրեն ժամանակակից հայտնի ցանցերից ոչ միայն անվամբ, այլև օրվա տևողությամբ ու համարակալման հաջորդականությամբ, ինչպես նաև նահանգների քանակով։ Աշխարհացույցի հեղինակը անհրաժեշտ մաթեմատիկական հաշվարկումներ է կատարել և նախընտրել է զոնաների նոր ստորաբաժանում։ Ինչպես տեսնում ենք, Աշխարհացույցի հեղինակը կիրառել է նորը և խուսափել է հնի ընդօրինակումից։

Քարտեզի ինքնուրույնությունը հաստատող ամենակարևոր ապացույցն է, ինչպես ասացինք, քարտեզի պրոեկցիան, որովհետև նրա վրա ներկայացվելիք աշխարհագրական բոլոր մանրամասների ցրված դիրքն ու համապարփակ տեսքը բնորոշվում են բացառապես այդ պրոեկցիայի էությամբ։ Ամբողջ աշխարհի քարտեզագրական պատկերման համար կեղծ կոնային պրոեկցիան առաջին անգամ օգտագործել է Աշխարհացույցի հեղինակը[17]։

Աշխարհի այն քարտեզը, որ հրապարակել է վերջերս ակադ. Ս. Երեմյանը[18], վերնագրի համաձայն ներկայացնում է Պտղոմեոսի քարտեզը և կազմված է նրա համառոտագրված տեքստի հիման վրա, սակայն քարտեզի հարավարևմտյան անկյունում տրված մակագրության համաձայն այդ քարտեզը «վերակազմված է ըստ Աշխարհացույցի»։ Այսպիսով, գրաֆիկայի միջոցով ընդգծվում է, որ Աշխարհացույցը հանդիսանում է Պտղոմեոսի քարտեզի համառոտագրված ընդօրինակությունը։ Բայց այդ քարտեզի համար օգտագործված է մի պրոեկցիա, որը ոչ Պտղոմեոսինն է, ոչ էլ Աշխարհացույցինը ու անհայտ է քարտեզագետներին։ Պտղոմեոսի քարտեզի պրոեկցիան հասարակ կոնայինն է, որի միջօրեականները կապված են ուղիղ գծերից, Աշխարհացույցի պրոեկցիան կեղծ կոնայինն է, որի միջօրեականները շրջագծային աղեղներ են առանց հասարակածում բեկվելու։ Ակադ. Երեմյանի այս քարտեզը կազմված է հիշյալ երկու պրոեկցիաների խառնուրդով և քարտեզ անունը կրել չի կարող։

Աշխարհացույցն ուսումնասիրող գիտնականները քարտեզագրական վերլուծումներ չեն կատարել, այլ անդրադարձել են նրան հայ ժողովրդի պատմության և նրա հասարակական մտքի զարգացման որոշ հարցերի ուսումնասիրության կապակցությամբ։ Դրա հետևանքով նրանցից ոմանք եզրակացրել են, թե, օրինակ, «Խորենացու նշանավոր երկասիրությունը իր աշխարհագրությունն է, ավելի թարգմանություն՝ քան թե ինքնադիր երկասիրություն է, վասն զի

16 Երկրի մակերևույթը կլիմաների են բաժանել միայն այն հեղինակները, որոնք ընդունել են նրա գնդաձևությունը։

17 Այդ պրոեկցիան ուրիշ գիտնականների կողմից օգտագործվել է շատ ուշ ժամանակներում՝ միայն XV դարում։

18 Տե՛ս «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1968, № 5, էջ 43։

ընդհանրապես Պապա Ալեքսանդրացու և Պտղոմեոսի համանուն գրվածքների համառոտ քաղվածքն է»[19], կամ որ Աշխարհացույցում «աշխարհագրական և մղոնաչափական շահավետ տեղեկություններ թարգմանված կերևին հույն աշխարհագրեն Պտղոմեա»[20]։ Աշխարհացույցը ֆրանսերեն թարգմանող Ա. Սուքրյանը համարել այն Պտղամեոսի երկի մի ընդօրինակությունը[21]։ Առանց բնագրերի քարտեղագիտական համեմատության, գերմանացի գիտնական Ֆիշերը ևս նույն կարծիքն է հայտնում[22]։

Հայտնի է, որ Պտղամեոսից հետո մինչև XV դարը ցամաքների, ծովերի ու աշխարհագրական այլ մանրամասների տեղադրության չափումներ ու ճշտումներ չեն կատարվել. անգամ մեծ հայտնագործությունների նախօրեին՝ XV դարում, բոլոր ճանապարհորդները օգտվել են Պտղոմեոսի տեղեկություններից, որոնք անտիկ աշխարհի գիտելիքների հանրագումարն էին ներկայացնում։ Աշխարհացույցը քննարկելիս ուշադրությունը չպետք է կենտրոնացնել ցամաքների կամ ծովերի եզրագծերի վրա. դրանք միջնադարի և ոչ մի քարտեզի վրա այլ գծագրությամբ հանդես գալ չէին կարող։ Հետագա հինգ դարերի ընթացքում՝ քաղաքական խոշոր տեղաշարժերի, ցեղերի վերախմբավորման, աշխարհագրական նոր տեղաբաշխման ու նոր կենտրոնների ստեղծման հետևանքով, Պտղոմեոսի քարտեզների մանրամասները չէին կարող դրսևորել VII դարի իրադրությունը։

Աշխարհացույցի հեղինակը իր կազմած քարտեզում օգտագործել է անցյալում կատարված չափումների արդյունքները՝ բոլոր ցամաքների ու ծովերի եզրագծերը, լայնության, երկայնության տվյալներն ու աշխարհագրական այլ մանրամասները։ Սակայն Աշխարհացույցի և Պտղոմեոսի քարտեզների այդ մանրամասների համեմատությունը չի կարող հիմք հանդիսանալ Աշխարհացույցի ինքնուրույնությունը կամ ընդօրինակություն լինելը հաստատելու համար։

Աշխարհացույցի բովանդակությունը, նրա հիմնական դրույթը քարտեզագրությունն է, հետևապես նրա քարտեզ լինելու և ինքնուրույնության հարցերը հետազոտելու համար պետք է քննարկվեն առաջին հերթին քարտեզագրության հարցերը։

Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկն» ունի հայերեն թարգմանություն. այն գտնվում է Մատենադարանում[23] և թարգմանված է ոչ թե Աշխարհացույցի հեղինակի կողմից, այլ մեկ ուրիշի։ Պտղոմեոսի քարտեզներում աշխարհամասերն ու տերիտորիաները դրսևորված են քարտեզագրական որոշակի առանձնահատկություններով, նրանցից յուրաքանչյուրում հանդես են գալիս առանձին տերիտորիաների ինքնուրույն հատկանիշները։ Մինչդեռ Աշխարհացույցը ամբողջ երկրագնդի ամփոփ և համառոտ նկարագիրն է՝ միայն մեկ

---

19 Գ. Զարպհանալյան, Պատմություն հայկական տպագրության, Վենետիկ, 1895, էջ 267։

20 Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարյան, Վենետիկ, հատ. Բ, էջ 595։

21 A. Soukry, Geographie de Moise de Corene d'aprés Ptolemée, Venise, 1861.

22 Տե՛ս I. Fischer, Pappus und die Ptolemaus karten Zischr d. Gesef Erdkunde, Berlin, 1919, էջ 337։

23 Տե՛ս Մատենադարանի 3965 ձեռագիրը, որ Խ. վարդապետի 1624 թ. ընդօրինակությամբ է հասել մինչև մեր օրերը։

քարտեզի վրա, իսկ նրա առանձին հատվածները ունեն քարտեզագրական մանրամասների տարբեր բեռնվածություն։

Իրականության չի համապատասխանում այն կարծիքը, որ Աշխարհացույցի հեղինակը իր ձեռքի տակ ունեցել է ոչ միայն Պտղոմեոսի բնագիրը, այլև նրա կազմած քարտեզները[24]։ Պտղոմեոսի քարտեզները այդ ժամանակ արդեն գոյություն չունեին, իսկ Ագաթադեմոնի վերծանած քարտեզի մասին, ինչպես նաև առհասարակ Պտղոմեոսի քարտեզների մասին, Աշխարհացույցում ոչ մի հիշատակություն չկա։ Աշխարհացույցի՝ ինչպես պրոֆ. Պատկանյանի հրատարակած համառոտ, նույնպես և Ա. Սուքրյանի հրատարակած ընդարձակ տեքստերում ոչինչ չի ասված դրանց մասին։

Պրոֆ. Ա. Աբրահամյանը գտնում է, որ Աշխարհացույցի հեղինակը օգտվել է Պտղոմեոսի աշխատություններից անմիջականորեն, որովհետև, ըստ Աբրահամյանի, Մղոնաչափքի ձեռագրի ընծայականում նշված է Պտղոմեոսի անունը։ Բայց Մղոնաչափքը առնչություն չունի Աշխարհացույցի հետ (այդ ապացուցված է վաղուց), իսկ այդ ընծայականում «Պտղոմեական»-ը «մղոնական» բառն է, որ աղավաղված է գրիչների կողմից[25]։ Բացի այդ, Աշխարհացույցի հեղինակը երեք անգամ նշել է (3, 5, 7 էջերում), որ ինքը միայն ծաղկաքաղ է արել Պապպոս Ալեքսանդրացու կողմից կատարած՝ Պտղոմեոսի աշխատության համառոտագրությունից. («Յորոյ ինքնագիր բոլորակին տիեզերագրութեանցն առեալ Պապայ Ալեքսանդրացւոյ համառոտարարս երկրագրութեամբ, յորմէ մեր ծայրաքաղ արարեալ գրեցաք զմեծամեծսն և զնշանաւորսն միայն»)[26]։ Մենք ոչ մի հիմք չունենք Աշխարհացույցի հեղինակին չհավատալու։

Հետազոտությունները հաստատում են, որ Աշխարհացույցում փոխառությունները այնքան էլ շատ չեն, ինչքան ենթադրվել է։ Աշխարհացույցի ընդհանուր Ասիայի ստվար մասի քարտեզագրական տվյալները նոր շարադրանք են. բնաշխարհներից Ինորիան առաջացել է բյուզանդական Թեոդոս II կայսեր ժամանակ V դարի կեսերին, Պափլագոնիան և Առաջին Գաղաթիան կազմավորվել են IV դարի վերջերին, Լիկոնիան ու Պաղիմանական Պոնտոսը ստեղծվել են 371 թթ. Հռոմեական կայսրության արևելյան տիրակալ Վալենտի կարգադրությամբ, իսկ Մյուսիսը, Փոյուգիա և Լիպոնտոս բնաշխարհները Պտղոմեոսի ժամանակ որպես առանձին բնաշխարհներ առհասարակ գոյություն չեն ունեցել։ Բոլորովին նոր տվյալների լուսաբանությամբ են շարադրված Բաբելոնը և Ներքին Եթիոպիան։ Հայաստանի, Աղվանքի, Վիրքի և Պարսքի տերիտորիաների այն մանրամասն պատկերացումը, որ առկա է Աշխարհացույցում, առհասարակ գոյություն չի ունեցել Պտղոմեոսի մոտ։ Երկրորդ դարից մինչև VII դարը պատմական, աշխարհագրական ու տնտեսական իրադրությունների ու խոշոր քաղաքական տեղաշարժերի պայմաններում Պտղոմեոսի քարտեզագրական նյութերը հնացած էին և չէին համապատասխանում ժամանակակից իրականություններ։ Աշխարհացույցը դրանք չի օգտագործել։

Այս բոլոր փաստերը վկայում են, որ Աշխարհացույցը ինքնուրույն աշխատություն է, ուր հաշվի են առնված Պտղոմեոսից հետո տեղի ունեցած բոլոր փոփոխությունները։

---

24 Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 11։

25 Տե՛ս Մ. Մ. Խաչատրյան, Հռոմեական Աշխարհաքարտեզը և Հայկական Մղոնաչափքը, «Բնագիտության և տեխնիկայի պատմություն Հայաստանում», 1967, N 4, էջ 111։

26 «Армянская география VII века», էջ 3։

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ մի խումբ ականավոր քարտեզագետներ, Լեո Բագրովի գլխավորությամբ, ժխտել են, որ Պտղոմեոսը առհասարակ քարտեզներ է կազմել իր «Աշխարհագրության ձեռնարկի» շարադրանքի հիման վրա և հաստատել են, որ քարտեզները կազմված են հետագա տարիներին՝ ըստ Պտղոմեոսի տվյալների։ Նրանք մասնավորապես հիմնավորում են այն դրույթը, որ այդ քարտեզները գծվել են IV դարում՝ Ագաթադեմոնի կողմից[27]։

Գիտնականների երկրորդ խումբը, Ռ. Ֆիշերի գլխավորությամբ, հակառակ տեսակետի է. վկայակոչելով որոշ հայ բանասերների ոչ ճիշտ տեղեկությունները, նրանք պնդում են, որ Աշխարհացույցի հեղինակը հիշատակել է Պտղոմեոսի կողմից կազմված քարտեզներից օգտվելու մասին։ Սակայն Աշխարհացույցի տեքստում այդպիսի վարկած չի շարադրված և նրա հեղինակը Պտղոմեոսի աշխատություններից ու քարտեզներից անմիջականորեն չի օգտվել։

* * *

Ինչպես հայտնի է, պրոֆ. Ք. Պատկանյանը 1877 թ. Աշխարհացույցի ռուսերեն իր թարգմանության առաջաբանում զարգացրեց այն տեսակետը, որ Աշխարհացույցը VII դարի գործ է, իսկ նրա հեղինակը կարող է լինել Անանիա Շիրակացին, նկատի ունենալով այդ հեղինակի տիեզերագիտական և մաթեմատիկական գիտելիքները։

Չեխ քարտեզագետ Հանս Մժիկը, հենվելով մի շարք հայ ուսումնասիրողների աշխատությունների վրա, դեռևս 1933 թ. Աշխարհացույցն ու Տիեզերագիտությունը համարել է միևնույն հեղինակի գործեր, սակայն նրանց մեջ եղած միմյանց հակասող տեսակետները նրան այն եզրակացության են բերել, որ Անանիա Շիրակացին հեղհեղուկ, հակասական տեսակետների տեր հեղինակ է[28]։

«Տիեզերագիտության» տեսակետները քննարկելիս Վ. Չալոյանը գտնում է, որ «Անանիա Շիրակացու հայացքները ձևակերպվել են քրիստոնեական, աստվածաբանական գաղափարների ազդեցության ներքո, և ինչպես Սուրբ գիրքը, այնպես էլ քրիստոնեական եկեղեցու ջատագովների գրականությունը նրա համար ունեցել են որոշակի հեղինակություն[29]։ Բայց երբ նա անդրադառնում է «Աշխարհացույցի» տեսակետներին, որ դարձյալ Անանիա Շիրակացու գրչին է վերագրում, այս անգամ հակառակ եզրակացության է հանգում, գրելով. «Վերլուծությունը հաստատում է, որ իր մտածելակերպով Անանիա Շիրակացին պատկանում է հայկական ուշ հելլենիստական դպրոցին», ապա պարզաբանում է, որ «հայ եկեղեցու հայրերը չէին հանդուրժում Անանիա Շիրակացու՝ երկրի կառուցվածքին ու բնությանը վերաբերող գիտությունը, որովհետև բազմաթիվ դեպքերում հակառակ էին Սուրբ գրքին»[30], որ նա չէր կարող «որոշ չափով չհարել դիալեկտիկական մտածելակերպին ու չընկալել բնության դիալեկտիկայի տարրերը»[31]։

Ն. Պիգուլևսկայան, որ նկատի ունի բացառապես Տիեզերագիտության

---

27 Տե՛ս R. A. Skelton, History of Cartography, N. Y., 1964.

28 Տե՛ս «Հանդես ամսօրյա», Վենետիկ, 1933, էջ 281, 511 և 583։

29 В. К. Чалоян, История армянской философии. Ереван, 1959, էջ 139—140։

30 В. К. Чалоян, Естественно-научные воззрения Анания Ширакаци. «Византийский временник», т. XII, էջ 158։

31 Նույն տեղում, էջ 159։

տեսակետները, այն համոզման է, որ «Անանիա Շիրակացին արտահայտել է Կոզմաս Հնդկաչուի գաղափարները, որոնք զարգացնում էին կղերական հայացքներ ու բարձրացնում Սուրբ գրքի հեղինակությունը»[32]։

Տիեզերագիտությունն ու Աշխարհացույցը որպես միևնույն հեղինակի աշխատություններ համարող Գ. Խրլոպյանը, Անանիա Շիրակացու աշխարհայացքը քննարկելիս նկատի ունենալով Աշխարհացույցը, եզրակացնում է, որ Շիրակացին «շատ հարցերում շեղվել է եկեղեցու ընդունած ուղղափառ գծից և ինքը դարձել է ոչ կրոնական, հակաեկեղեցական բնափիլիսոփայական հոսանքի հիմնադիրներից մեկը», մինչդեռ Տիեզերագիտությունն ուսումնասիրելիս պնդում է, թե «հարկ է նշել, որ օդերևութաբանական հարցերում Շիրակացու մոտ ավելի զգալի է թելեոլոգիական սկզբունքը»[33]։

Անանիա Շիրակացու Տիեզերագիտությունը ռուսերեն թարգմանողներ Ս. Արևշատյանը և Ք. Դավթյանը գրքի ներածականում գրում են, որ «Անանիա Շիրակացին գտնվում է իդեալիստական դիրքերում. փիլիսոփայական հիմնական հարցը նա վճռում է որպես քրիստոնյա մտածող»։ Բայց շարունակելով ուսումնասիրությունը, այս անգամ արդեն Աշխարհացույցում արտահայտված հայացքների շրջանակում, նրանք հանգում են նոր եզրակացության. «Անանիա Շիրակացին առավել կարևոր հարցերում հելլենական ուսմունքի հետևորդ է և միայն աննշան տուրք է տվել քրիստոնեական տիեզերաբանությանը»։ Թարգմանիչները այնուամենայնիվ նկատելով այդ երկու աշխատությունների ակնհայտ հակասությունները, անհրաժեշտ են համարել դրանք որևէ կերպ բացատրել և հարմար են համարել ասել, թե «այդպիսի հակասական տեսակետների պատճառը նրանումն է, որ Տիեզերագիտությունը, գրված լինելով ուսուցման նպատակներով, որոշ մասերում կոմպիլյատիվ բնույթ է կրում»[34]։ Բայց թարգմանիչները նույն ներածականում ժխտել են իրենց իսկ առաջ քաշած այդ թեզը, պնդելով, որ «Շիրակացին ծանոթացնելով ընթերցողին գիտական աշխարհի համարյա բոլոր տիեզերագիտական տեսակետներին, միշտ ընդգծել է իր վերաբերմունքը ընդունելիս կիրառել է ընկալման յուրահատուկ մոտեցում, իսկ մերժելիս այն ենթարկել է խիստ քննադատության»[35]։

Աշխարհացույցի և Տիեզերագիտության մեջ արտահայտված հայացքների ուսումնասիրությունը մեզ բերում է այն եզրակացության, որ Աշխարհացույցի հեղինակը չէր կարող Անանիա Շիրակացին լինել, որովհետև Տիեզերագիտության և Աշխարհացույցի տեսակետները սկզբունքային մի շարք հարցերում (փիլիսոփայական, տիեզերագիտական, բարոնեղագրական) տրամագծորեն հակառակ են՝ միմյանց ժխտող ու հակասող։

Այդ հակասությունների մասին ժամանակին գրվել է։ Դրանցից և մի շարք ուրիշ փաստերից ելնելով ակադ. Հ. Մանանդյանը Աշխարհացույցը համարում է IX դարում Խորենացու գրած աշխատություն։ Ժամանակագրական այդ տեսակետը պաշտպանել են Յ. Մարկվարտը, Սեն Մարտենը, Վիստոն եղբայրները և Կիպերտը։ Պատմաբան Ի. Ֆիշերը, չեխ գիտնական Մժիկը և Արսեն Սուքրյանը Աշխարհացույցը համարել են Պտղոմեոսի աշխատության մի ընդ-

32 Н. Пигулевская, Византия на путях в Индию, М., 1951, էջ 157։

33 Տե՛ս Գ. Խրլոպյան, Անանիա Շիրակացու աշխարհայացքը, Երևան, 1964, էջ 524, 145 և 170։

34 Анания Ширакаци, Космография, Ереван, 1962, էջ 10, 15 և 16։

35 Նույն տեղում, էջ 11։

ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ

Վերարտադրված է VII դարի Աշխարհացույցի հասկանալու և բնագրման ձեռագրերի հիման վրա.



օրինակությունը։ Այդ հակասություններից ելնելով, մի շարք գիտնականներ (այդ թվում նաև ակադ. Ս. Երեմյանը) այն կարծիքին են, որ Աշխարհացույցը չի պատկանում Անանիա Շիրակացու գրչին, մինչդեռ պրոֆ. Ա. Աբրահամյանը և պրոֆ. Թ. Հակոբյանը աներկբայորեն պնդում են, որ Աշխարհացույցի հեղինակն է Անանիա Շիրակացին։

Վերոհիշյալ բոլոր հեղինակները հարկ եղած ուշադրություն չեն դարձրել Աշխարհացույցի հետ կապված հարցերի քարտեզագրական ու տիեզերագիտական լուսաբանության վրա, ուստի մենք անհրաժեշտ ենք համարում ստորև անդրադառնալ դրանց նաև այդ տեսակետներից։

1. Ուսումնասիրելիք նյութի աղբյուրների հարցը

Աշխարհացույցի հեղինակը Աստվածաշնչում չգտնելով երկրագիտության վերաբերյալ որևէ հիմնավոր բան, բացառությամբ հազվագյուտ, այն էլ ցրված ու դժվարահաս, մութ տեղեկությունների, դիմել է հեթանոս հեղինակներին. «Յաղագս աշխարհագրութեան յաստուածային գիրս ոչ ուրեք գտանեմք ոճով ասացեալ, այլ զոյզն ինչ դուն ուրեք, և այն դժուարահաս և տաժանելի։ Արդ վասն զի անհասք զոցա եղեալ մեր յարտաքինսն հարկաւորիմք ձեռնարկել» (էջ 1)[36]։ Դա նշանակում է, որ Աշխարհացույցի հեղինակն ընդունում է անտիկ աշխարհագրության դրույթները. Աստվածաշնչում շարադրված աշխարհագրական տեղեկությունները, ինչպես տեսնում ենք, նրա կարծիքով զուրկ են բավարար հիմունքներից։ Բերելով Աստվածաշնչից քաղվածք այն մասին, որ «բավական է աստծո հրամանը, որ ջրերը պահվեն իրենց ափերում, առանց ցամաքի կարիքը զգալու», Աշխարհացույցի հեղինակը նկատում է. «Մեք որպես անհաս եղեալ մեծութեան՝ լռեմք, և դրեմք զայս միայն զոր կոխեաց ոտն կամ ետես ակն մարդոյ» (էջ 5)։

Անանիա Շիրակացին Տիեզերագիտության մեջ գտնում է, որ սկզբում պետք է հերքել հեթանոս գիտնականներին և հետո միայն դիմել եկեղեցական հայրերի ուսմունքին. հեթանոս գիտությունից սովորել միայն այն, ինչ թույլ է տալիս Պողոս առաքյալը և դուրս նետել հեթանոս, խելառ գիտնականների ցնորամիտ ճառերը, որոնք չցանկացան ճանաչել աստծուն և ամբողջ էության ծագման պատճառ հռչակեցին ատոմն ու մատերիան. «Զխօստացեալսն մեր հատուսցուք զբան՝ յարտաքնոցն առեալ զառարկութիւն որպես զի յետոյ յեկեղեցականն ելեալ մեր գեղեցիկ հետևեսցի շարադասեալ ընդունակք։ Զի ն օրինակն այսպես և ճշմարտութիւն կարգաւորեցաւ։ Արդ ես կամիմ ուսանիլ յարտաքնոցն յայնցան է, ուստի Պողոս ինձ հրամայէ և զանց առնել զհեթանոսական խելագարութեամբն՝ բանդագուշեալ իմաստնոցն ճառիւք, որք զաստուած ոչ կամեցան ճանաչել և պատճառս լինելութեան զհիւղէ ասացին և նիւթ գոյիցս եղելոց» (էջ 1)։ Աստվածաշնչի այն միտքը, որ Աշխարհացույցի հեղինակը գիտակցորեն ժխտել էր, Անանիա Շիրակացին աներկբա կերպով ընդունում է. ես հավատում եմ,— գրել է նա,— որ ջրերը պահվում են անփոփոխ քանակով, աստվածային հրամանով... որովհետև աստվածը ինքն է ասել՝ փակեցի ծովը դարպասներով. «Արդ թէպետև օրինակս հաւանականս տան ար-

36 Քաղվածքները Տիեզերագիտությունից բերված են Ք. Պատկանյանի «Անանիա Շիրակունոյ մնացորդք բանից» գրքից, իսկ Աշխարհացույցից՝ Պատկանյանի հրատարակության («Армянская география VII века», СПб. 1877) հայերեն տեքստից։

տաքինքն, սակայն ինձ ոչ է հաճոյ. քանզի հաւատացեալ եմ թէ հրաման աստուածային է որ ունի զծով միակշիռ արգելեալ, ըստ քանի Սաղմոսին որ ասէ. Սահման եղ որ ոչ անցանէ, և ոչ ևս դառնան ծածկել զերկիր որպէս զառաջինն. քանզի ինքն ասէ Տէր, փակեցի զծով զրամբք» (էջ 42)։

2. Երկրի ձևի հարցը

Աշխարհացույցը պաշտպանում է երկրի գնդաձև լինելու տեսությունը, նրա հեղինակը գտնում է, որ երկիրը պատկերացնելու համար անհրաժեշտ է պատրաստել նրա նմանությամբ մի գունդ։ Երկրագնդի կլիմա-գոտիները հասկանալու համար Աշխարհացույցը հրավիրում է այն դիտել գլոբուսի (գնդակաձի) վրա, իսկ այդ գնդի տեսքի ու մեծության մասին որոշակի գաղափար տալու նպատակով բացատրում է. եթե գունդը մեծ շրջանով բաժանենք, այն կկազմի 180 աստիճան, որը կընդգրկի երկրի բնակեցված ամբողջ տարածությունը. «Յորս նախ առնելի է զտիեզերաց սահմանութիւնս նմանութեամբ զընդական պատկերին, և ապա ձևեալ ըստ նորին նմանութեան երկրորդ զնդական աստղականաւ, զկէս շրջանակին մեծի ունելով հարիւր ութսուն բնակութիւն մարդկան» (էջ 2)։ Այստեղ Աշխարհացույցը ոչ միայն ընդունում է երկրի գնդաձևությունը, այլև այդ գնդի վրա համապատասխան աստիճանային հաշվարկումներ է կատարում՝ գնդին հատուկ մաթեմատիկական եղանակներով։

Անանիա Շիրակացին գտնում է, որ երկիրը քառակուսի բարձրադիր տափարակ հարթություն է՝ տեղադրված երկնքի կենտրոնում, նա երկնքի պտույտի արագության հետևանքով չի իջնում երկնքի ցածի կիսաշրջանը. ապա հեղինակը կոնկրետացնում է նկարագրությունը այդ երկու հակադիր ուժերի միջնասահմանն ընկնում է երկրի տրամագծի վրա, որի բոլոր չորս կողմերը միմյանց նկատմամբ փոխուղղահայց են. «Եւ բանզի երկիր չորեքկուսի ի միջոցի երկնի կառուցաւ, ոչ թոյլ տայ սմա երկին իւրով արագութեամբն ի ներքին կիսագունտն խոնարհել. քանզի երկիր իւրով ծանրութեամբն հակէ ի վայր իջանել, և հողմ իւրով ուժգնութեամբն ջանայ ի վեր բերել զնա. և ոչ ծանրութիւն երկրիս թողացուցանէ ի վեր բերել, և ոչ ուժգնութիւն հողմոյն թոյլ տայ ի վայր իջանել։ Եւ այսպէս զհաւասարակշիռ կետն կալեալ կայ և յերկոցունց հակառակացն զտրամագիծն ունի։ Իսկ կայսն սորա ի տրամագծի անդ զուղիղ անկիւնս չորեսեան առ միմեանս հայեցուցանէ, և ի հայել ուղիղ անկեանցն առ տրամագիծսն միջին, զամենայն հարթարտակ զուգամասն գլեռնային և զդաշտային և զծովային յարմարեալ անվնաս պահ է. զի որք ի սայս են՝ անկասկած առցեն գլինելութիւն հրամանաւ արարչին» (էջ 37—38)։

Այստեղ ընդօրինակված է երկրի տափարակ լինելու հնադարյան այն տեսությունը, թե երկրագունդը մի հարթություն է, իսկ նրա վրա առկա լեռները միջոց են երկիրը թեքվելուց պաշտպանելու՝ նրան միշտ հավասարակշիռ դիրք հաղորդելու նպատակով[37]։ Անվիճելի է նաև, որ «չորս կողմերը միմյանց նկատմամբ ուղղահայաց» են լինում միայն ուղղանկյան դեպքում, ինչպես որ պատկերել էր երկիրը Կոզմաս Հնդկաչուն։

Շիրակացին տեղյակ է պահել ընթերցողին նաև «չար» փիլիսոփաների, այսինքն՝ հունական անտիկ շրջանի գիտնականների ասածներին. նրանց օրի-

37 Տե՛ս И. Ю. Крачковский Избранные сочинения, т. IV. М., 1957, էջ 20 և 41։

նակը փչած եղան փուչիկն է,— գրել է նա,— որի մեջ ձգում են բոլորովին կլոր կորեկի խոշոր հատիկը և նա պատերին չհասած կախվում է մեջտեղում, օդի մեջ. «օրինակ առնուն զփամփուշտ արջառոյ, փչեն և ընկենուն ի նա հատ կորեկի մեծի որ լինի բոլոր ամենևին, և յոչինչ հասանելով ի միջին կառչի»[38]։ Ապա Շիրակացին հայտնում է. «Սակայն ես համաձայն չեմ դրանց հետ»։ Այստեղ ևս մերժված է երկրի գնդաձև լինելը. Շիրակացին ձվի օրինակը բերելիս ոչ թե երկրի գնդաձևությունն է ընդգծում, այլ պարզապես շեշտում է երկնքի կառուցվածքը, թե ինչպես դեղնուցը շրջապատված է սպիտակուցով ու կճեպով, այնպես էլ երկիրը շրջապատված է օդի, ջրի և հրի շերտով։ Հակառակ տեսակետը պաշտպանելիս պարտավոր ենք հաստատել, որ միջնադարի մտածողների ճնշող մեծամասնությունը, դրանց թվում և եկեղեցին, ընդունել են երկրի գնդաձևությունը, որովհետև դրանք բոլորը երկրի մասին խոսելիս բերել են ձվի օրինակը։ Սակայն Անանիա Շիրակացին ոչ միայն ընդունել է երկիրը որպես հարթություն, այլև հիմնավորել է այն՝ «գիտնալով սաղմոսից, որ ասված երկիրը հիմնադրեց ծովերի վրա» (էջ 38)։ Շիրակացին պարզել է նաև, թե այդ ինչպես է, որ «երկիրը իր ծանրությամբ կարող է մնալ ջրի երեսին և չսուզվել» (էջ 39)։ Այդ կասկածանքը Շիրակացին փարատել է սաղմոսում ասված այն խոսքով թե՝ «ես կհիմնադրեմ նրա սյուները» (էջ 39)։ Այս նկատի ունենալով է, որ Շիրակացին բացատրել է նաև երկրաշարժի պատճառները, թե՝ «տեղաշարժում է երկիրը նրա տեղադիրքից ու նրա սյուները ցնցվում են» (էջ 40)։

3. Արեգակի, երկրի և լուսնի համեմատական մեծության հարցը

Աշխարհացույցի հեղինակը արևի ու երկրագնդի համեմատական մեծության առթիվ հանգել է այն տեսակետին, որ արևը առավել փոքր է երկրագնդից և հավասար նրա երկու կլիմա-գոտուն և ընդգրկում է երկրի միայն 40 աստիճան տարածությունը. «Վասն որոյ ասացին զարեգակն շատ փոքրագոյն քան զերկիրս զայս լինել. քանզի վեցերորդ, կամ երրորդ, լինել չափ արեգական, զերկուս նահանգսն ասելով բովանդակութիւն արեգական, այս ինքն է օթևանս քառասուն» (էջ 4)։

Անանիա Շիրակացին արևի ու երկրագնդի համեմատական մեծության առթիվ գտնում է, որ լուսինը իր չափերով հավասար է երկրի մեծությանը, իսկ արևը, Սուրբ գրքի վկայությամբ, առավել մեծ է լուսնից։ Անգամ դիտումներից կարող ենք նկատել, որ արևը մեծ է լուսնից, գրում է նա. «Եւ յայսմ ամենայն է յայտ է թէ մեծ է արեգակն, ըստ աստուածային գրոց վկայութեան, որում և արտաքնոցն բարեաց ի ճահ պստահեն վկայութիւնք։ Քանզի ասեն, թէ մեծութիւն լուսնոյ է ըստ չափոյ երկրի. և արեգականն առաւել է քան զնա՝ ըստ աստուածային գրոց զի թէպէտ և ասաց երկոցունց մեծամեծս, և սակայն ի համեմատութենէն ասէ լուսաւոր մեծ, և լուսաւոր փոքր» (էջ 60)։ Եթե Աշխարհացույցն իսկապես պատկաներ Անանիա Շիրակացու գրչին, ապա այսպիսի ընկրզբունքային խնդիրներում չէին կարող պաշտպանվել միմյանց միանգամայն հակառակ տեսակետներ. տիեզերագիտական բոլոր դրույթները, որոնք աներկբայորեն ժխտված են «Տիեզերագիտություն» աշխատության մեջ, պաշտպանվում են Աշխարհացույցի հեղինակի կողմից։

---

38 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և Տոմար, Երևան, 1940, էջ 11։

4. Արեգակի ջերմության աղբյուրի հարցը

Աշխարհացույցի հեղինակը պաշտպանում է այն տեսակետը, որ արևը իր սեփական լույսն ու տաքությունն ունի, որոնք չի ստանում ոչ այսպես կոչվող կրակի գոտուց, և ոչ էլ որևէ այլ տեղից։ Նրա կարծիքով երկրագնդի այրեցյալ գոտին առաջացել է արևից, նրա կրակյա բարակ ճառագայթների հոսքից. «յորմէ ըստ հեղման շողոյն նրրացեալ բորբոքութեան՝ ասացին գայրեցական գոտին» (էջ 4)։

Անանիա Շիրակացին գտնում է, որ արևն իր բնույթով սառն է, նա տաքություն և լույս է ընդունում կրակի գոտուց (որ հասնում է նրան 13 օրվա ընթացքում) և ցած է ուղարկում դեպի օդ, լուսավորելով և տաքացնելով երկիրը. «Այնչափ միայն գիտացին դնա (Արեգակը — Մ. Խ.) թէ է տարր սեղմ, մաքուր, գնդաձև, բոլոր ամենևին անգեղ և անսպի. ինքն է յուրտ բնութիւն և զջերմութիւն և զլուսավորութիւն առեալ յարփւոյն՝ հեղու յօդս, որով լուսաւորի և ջեռնու երկիր» (էջ 54)։ Ապա հեղինակը ճշտում է. «շիջանի այրեցանողն, ունի զարփին թոուցեալ և զմոնրասատեղս, ուստի յայսմ լուսաւորի արեգակն, գնալով երեքտասան աւուրս ընդ նա և ապա ամենայն լուսաւորքն յարեգականէն առոդանին» (էջ 66)։

5. Ծովի ու ցամաքի փոխհարաբերության հարցը

Աշխարհացույցի հեղինակը հաստատում է, որ օվկիանոսը չի շրջափակում երկիրը, այլ գտնվում է նրա հյուսիս-արևմտյան անկյունում. այդ օվկիանոսի կեսը տարածված է արևելք՝ հյուսիսից, իսկ մյուսը դեպի հարավ՝ արևմուտքից և նրա երեք քառորդ մասն է ընդգրկում. «Ոչ ասեն շուրջ լինել զօվկիանոս, այլ ի մի կողմանէ յանկեան հիւսիսոյ-յարևմտից, և տարածի ընդ հիւսիսի յարևելս կոյս յերկուց մասունցն մասն մի ընդ արևմուտս. ի հարաւակոյս ի չորից մասանցն երեք մասունք» (էջ 4)։ Աշխարհացույցի հեղինակը կոնտինենտալ տեսությանն է հարում, նա գտնում է, որ երեք խոշոր ծովերը (Հնդկական, Հունական և Կասպիական) շրջապատված են բնակեցված ցամաքներով. «Եւ զերիս ծովուցն մեծամեծաց զՀնդկայնոյն ասեմ և զՅունականն, և զԿասպիականն՝ որ է Վրկանին ծով, և երկիր բնակութիւն մարդկան ասէ շուրջ լինել զնոքօք, և է ճշմարիտ» (էջ 4)։

Անանիա Շիրակացին ծովի գրաված տարածության հարցի մասին հակառակ համոզմանն է, նա գտնում է, որ երկիրը շրջապատված է հսկա ծովով, որը տարածված է երկրի բոլոր կողմերում՝ արևելքում և արևմուտքում, հյուսիսում և հարավում, առաջացնելով ծոցեր ու խորշեր երկրի չորս կողմերում. «Եւ զծովն մեծ զայն շուրջ պատեալ զաշխարհովս ասացին, և ի բազում տեղիս և կողմանս յարևելս և յարևմուտս. ի հիւսիսի և ի հարաւ և ի գոգս և ի խորշս դիմեալ ծովացեալ և անջրպետ կղզիք մնացեալք ի չորեսին կողմանս յոր բնակին բազում աշխարհք» (էջ 31)։ Ջրերի նման տեղաբաշխումը Անանիա Շիրակացին նույնպես աստվածային կամքին է վերագրել, որովհետև «Այստեղից պետք է եզրակացնել, որ նա է (աստվածը) հաստատել որոշակի սահմաններ ծովածոցերի համար, որոնք գոյություն ունեն երկրի բոլոր ծայրամասերում» (էջ 41)։

6. Կասպից և Մեռյալ ծովերի հարցը

Աշխարհացույցը գտնում է, որ ոչ միայն Հյուրկանիան և Կասպիցը առանձին ծովեր չեն, այլ առանձին ծովեր չեն նաև Ասփալդեսն ու Սերբինիդիսը (էջ 14)։

Շիրակացին Ասպիսն ու Հյուրկանիան տարբեր ծովեր է համարում, նա այն տեսակետին է, որ Հյուրկանիան և նրան համընկեր, այսպես կոչվող Ասպիսը հիմնական ծովից բաժանված են դգալի տարածությամբ. «Թէպէտ և ասեն ոմանք զծովէն որ անուանեալ կոչի Հիւրկանիա, և զնորուն ընկեր է որ կոչի Ասպիս, եթէ զատեալ մեկնեալ են ի բուն ծովէն» (էջ 41)։

Հյուրկանիա և Ասպիս երկու տարբեր ջրավազանների մասին ակադ. Մանանդյանի կողմից նշած այս հակասության առթիվ Ա. Աբրահամյանը գրում է, որ երկրորդ անունն ընդմիջարկություն է հետագա գրիչների կողմից[39]։ Բայց խնդիրը այն է, որ ջրային միևնույն ավազանի երկրորդ անվան սխալը գալիս է վաղ անցյալից։ Բարսեղ Կեսարացին, ընդօրինակելով Արիստոտելին, ընդունել է, որ Հյուրկանիան և Կասպիականը տարբեր ծովեր են։ Այն ժամանակի աշխարհագրական գիտելիքների նման մակարդակը թերևս բացատրելի էր, բայց VII դարում, երբ առկա էին Էրատոսթենեսի և Պտղոմեոսի աշխատություններն ու հռոմեական Աշխարհաքարտեզը, Տիեզերագիտության հեղինակի կարծիքը Կասպից ծովի մասին, անշուշտ, որակում է նրա թույլ գիտելիքները աշխարհագրության բնագավառում։ Սակայն Տիեզերագիտության մեջ աշխարհագրական տեղեկությունների այդպիսի օրինակները եզակի չեն։ Հրեաստանի տերիտորիան նկարագրելիս Աշխարհացույցը հիշատակել է նաև Մեռյալ ծովի մասին (էջ 21), բայց Տիեզերագիտության հեղինակի կարծիքով այն դարձյալ երկու ծովակ է, որոնցից առաջինը Ասփալդեսն է, որ մոտ է Հրեաստան աշխարհին, իսկ երկրորդը Սերբինիդիսն է, որ գտնվում է Եգիպտոսի և Պաղեստինի միջև ու տարածվում է մինչև արաբացոց աշխարհ. «Սակայն ոչ է պարտ զծովական ծովս կոչել ոչ զԱսփալդէս ծովակ որ մօտ յաշխարհն Հրէաստանի է, և ոչ զՍերբինիդիս ծովակ, որ է ընդ Եգիպտոս և ընդ Պաղեստին, է ի միջի, և գայ հասանէ յաշխարհն Արաբացւոց» (էջ 41)։ Այդ երկու անունները, ինչպես հայտնի է, Մեռյալ ծովին տարբեր ժամանակներում տրված անուններն են[40], որ Անանիա Շիրակացին դարձյալ ընդունել է որպես երկու առանձին ծովեր՝ անծանոթ լինելով աշխարհագրության ժամանակակից հարցերին։

7. Տարվա եղանակների և կլիմայական գոտիների հարցը

Աշխարհացույցը տարվա եղանակների փոփոխությունները համարում է աշխարհագրական լայնության և արևի ճառագայթների անկման անկյան տարբերությունների հետևանք, որովհետև նրա հեղինակը երկիրն ընդունել է որպես գունդ։ Այդ հիմունքով Աշխարհացույցը երկրագնդի բնակեցված մակերեսը զուգահեռականներով բաժանել է յոթ կլիմաների, այդ վայրերում ամառվա

---

39 Տե՛ս Ա. Աբրահամյան, Խորենացուն վերագրվող «Աշխարհացույցի» հեղինակի հարցի շուրջը, Երևան, 1940, էջ 71։

40 Տե՛ս Դ ж. Т о м с о н, История древней географии, М., 1953, էջ 250։

ամենաերկար օրվա տևողության հիման վրա նշելով դրանցից յուրաքանչյուրի աշխարհագրական լայնությունը։

Շիրակացին ոչ թե երկիրն է բաժանում գոտիների, այլ երկնային սֆերան, որովհետև երկիրը հարթություն է համարում, իսկ երկինքը՝ սֆերա։ Տարվա եղանակների փոփոխումը նա բացատրում է հետևյալ կերպ. որովհետև ամռանը արևը երկար ժամերի ընթացքում է անցնում օդով, ուստի այդ երկարատև ժամանակաընթացքում վառում և չորացնում է երկիրը. «Եւ յետ այսորիկ սկսանի մօտել արեգակն ի փոփոխմունս ամաբայնոյ և երևեցուցանէ զդնացս իւր ի կողմանս հիւսիսոյ, ձգել և երկայնացուցանել զտիւս։ Եւ քանզի յամրադնաց ժամօք անցանէ զօդովք երկարաձիգ դնացիւք. ջեռուցանէ ի վերայ երկրի զօդս, և ծծէ ի ներքոյ զխոնաւութիւն, երկրի» (էջ 57)։ Ամռան արևի երկարատև շարժման այդ տեսությունը հենվում է Կոստանդին Անտիոքացու այն պարզունակ ենթադրության վրա, թե հարթ երկրի հյուսիսային մասում գոյություն ունի մի կոնաձև բարձր լեռ, որի շուրջը կանոնավոր կերպով շարժվում են արևն ու լուսինը և դրա հետևանքով առաջանում են գիշեր և ցերեկ։ Այդ տեսության համաձայն, ամռանը արևը հորիզոնից բարձր է լինում, ուստի և հիշյալ լեռան սուր ծայրի հատվածով անցնելիս համեմատաբար կարճ ժամանակով է ծածկվում, որի հետևանքով և գիշերը կարճ է լինում, մինչդեռ ձմռանը արևը հորիզոնին մոտ է լինում և անցնում է նույն լեռան ստորոտային մասով, որը անհամեմատ լայն է, ուստի և գիշերները երկարում են։

8. Անկյանք ծովի մասին

Աստվածաշնչում ասված է, որ ցամաքների վրա գոյություն ունեցող ծովերից բացի ամբողջ ցամաքը շրջապատված է արտաքին անկյանք ծովով։ Աշխարհացույցի հեղինակը, ի վիճակի չլինելով պնդել ծովի առկայությունը անծանոթ երկրի շուրջ կամ ցամաքինը՝ անծանոթ ծովի շուրջ, նկարագրում է միայն այն, ինչ որ մարդու աչքը տեսել է և որի վրա մարդը ոտք է դրել. «Բայց թէ և է պանծանօթ երկրաւ ծով, կամ շուրջ զպանծանօթ ծովու երկիր, մեք որպէս անհաս եղեալ մեծութեան՝ լռեմք, և զրեմք զայս միայն զոր կոխեաց ոտն կամ ետես ակն մարդոյ» (էջ 5)։

Անանիա Շիրակացին համամիտ է Աստվածաշնչին և գտնում է, որ երկիրը շրջապատող ծովն անմարդաբնակ է ու անսահմանափակ, որովհետև նրա շուրջ գոյություն չունի ոչ երկիր և ոչ էլ այլ բան, որ արևը նրա վրայով չի անցնում, որովհետև ծագում է և մայր մտնում եզրերով, եզերքի մոտ. «Իսկ ի ծովուն, որ շուրջ պատին զերկրաւ, ոչ զոն ի նմա կենդանիք, և ոչ եղր սպառուածի, քանզի ոչ երկիր և ոչ այլ ինչ կա զնովաւ, և ոչ արեգակն անցանէ զնովաւ, այլ ընդ եզր նորա առ երկրաւ մտանէ և ելանէ» (էջ 40)։

9. Երկնային սֆերայի կառուցվածքի հարցը

Աշխարհացույցի հեղինակը գտնում է, որ կիսագնդերի հարավային տարածությունը որոշ չափով փոքր է՝ սֆերան ավելի նեղ լինելու հետևանքով. «Քանզի ի նմա ասացին փոքրագոյն զծագրեալ վասն անձուկ գոլոյ բոլորակին և զդէմսն նմանապես նորին ի հարավային եզրն, զոր կոչեն ցամաքեալ» (էջ 4)։ Նրա կարծիքով հյուսիսային և հարավային սֆերաները միմյանց հավասար չեն, հարավային կիսասֆերան հյուսիսայինից փոքր է, սեղմված է։

Ըստ Անանիա Շիրակացու, երկնային սֆերան բաժանված է երկու կիսագնդերի, որոնցից մեկը գտնվում է վերևում, իսկ մյուսը նայում է ցած. երկուսի արտաքին մակերևույթները հավասար են միմյանց և վերին ու ներքին կիսասֆերաների տրամագծերը ճշգրտորեն համընկնում են. «Քանզի ըստ ձեւոյ բուն երկնի և սա շրջագայ անդադար ի նմանէ հարկաւորեալ և ձև բոլոր շրջագային բաժանի յերկուս կիսագունտս, զի իցէ մին ի վերոյ. և ի միւսն հայեսցի ի ներքոյ և հայեցուած երկուց կիսագնտիցն հանդիպութեամբ կշիռ ուղիղ ի վերին և ի ներքին տրամագիծն» (էջ 36)։ Այս հարցում ևս Անանիա Շիրակացին բացահայտորեն ժխտում է Աշխարհացույցի աստղաբաշխական ու աշխարհագրական տեսակետները։

10. Երկնքի հյուսիսային բևեռի հարցը

Աշխարհացույցի հեղինակը գտնում է, որ այրեցյալ գոտում Զոդիակի համաստեղությունները ծագում և մայր են մտնում, մինչդեռ Փոքր Արջը երևում է միայն հյուսիսային կողմում և օրվա ընթացքում պտույտ է գործում միայն մեկ և կես աստիճանի սահմանում, որովհետև գտնվում է երկնքի վերին բևեռում. «Քանզի որ ի վերայ այրեցածին բերին կենդանատեսակքն, մտանեն և ծագեն, բայց փոքր արջն գեր ի վերոյ կացեալ լինի երկրի ի հիւսիսային կողմանսն ասպարիզօք հինգ հարիւր և երկու հինգերեկօք» (էջ 1)։

Անանիա Շիրակացին ժխտում է Փոքր Արջի՝ բևեռում լինելու հանգամանքը և գտնում է, որ չպետք է կրկնել հեթանոս այն փիլիսոփաների արտառոց խոսքերը, որոնք երկնքի բևեռ են համարում այն աստղերը, որոնք պտտվում են տեղում, չեն ծագում արևելքում և մայր չեն մտնում արևմուտքում. «Աստեղացդ զոր կոչեն բևեռս երկնից որ ի տեղն գաս շուրջ և ոչ ծագեն յարևելից և գան ի մուտս և սայլք աստեղացդ որք դէմ ընդդէմ զօրէն անուոյ հոլովին, և այլ խումբքն՝ որ շուրջ զնոքօք են, մշտագայ երևմամբ շրջագայանան՝ ոչ երկրորդեցից զանհամոցն ճառս, զի յոլովս ասել զսուտն՝ ձանձրոյթ ձեզ լինի» (էջ 48)։

11. Հակոտնյաների հարցը

Աշխարհացույցի հեղինակը այն կարծիքին է, որ 17° լայնությունից հարավ և 63° լայնությունից հյուսիս, ինչպես նաև Իսպանիայի ամենաարևմտյան ծայրից և արևելքի Սինացոց աշխարհից այն կողմերը անծանոթ երկիր է. որ ոչ ոք չի տեսել և չգիտե, թե դա բնակված է թե անբնակ. «Ի ծայրէ Սպանիա աշխարհին մինչև յարևելս յեղր Սինէացւոց աշխարհին անծանօթ երկրի մասունս հարիւր ութսուն։ Սոյնպես և լայնութեան սկիզբն արարեալ յայրեալ գոտւոյն չափեալ զհիւսիսի զանծանօթ ծով և երկիր՝ մասունս վաթսունեերիս։ Եւ դարձեալ յայրեալ գօտւոյն ի հարաւակոյս չափեալ յանծանօթ երկիր՝ մասունս եւթնեւտասան, որպէս՝ զի լինել ամենայն լայնութեանն մասունս ութսուն։ Եւ առաւել յարտաքս կոյս քան զայս չէ ուրուք զեղր երկրի տեսեալ և կամ գիտացեալ» (էջ 2—3)։

Անանիա Շիրակացին շարադրելով հեթանոս փիլիսոփաների հայացքները այն մասին, որ ընդդիմատունք հատվածում գոյություն ունեն բնակիչներ, գտնում է, որ նրանց ասածը մեծ անմտություն է, եթե ոչ մեղսագործություն, չխոսելով այն մասին, որ դա հակառակ է Սուրբ գրքի ասածներին. մենք պարտավոր ենք հավատալ մեծ ուսուցչին և նրա նման աստվածային մարդկանց, և

ոչ թե հեթանոս փիլիսոփաներին. «Ասեն արտաքինքն զբնակութիւն կենդանեաց աստի և անտի, եթէ զոն ի ներքոյ երկրի մարդիկ և այլ կենդանիք որք ընդդիմատունք են մեզ, որպէս ճանճք զխնձորով պատեալ, նոյնպես մարդիկ զերկրաւ, և յամառեալ պնդին ասելով. Եթէ ոչ էին ընդդիմատունք ո՞ւմ արդեօք արեգակն տայր լոյս զկէս օրն յորժամ ստուերաւն զմեզ զիշերացուցանէ... Այս են անմտութիւնք մեծ և ավելի թուին ինձ ի սոցանէ ասացեալքն, թողում ասել զյանդիմանութիւնն որ յաստուածային զրոցս ...Արդ պարտիմք հավատալ մեծի վարդապետին, և նորուն նմանեաց արանց աստուածայնոց, և ոչ արտաքնոց» (էջ 39—40)[41]։

Գոյություն ունեն ուրիշ երկու փաստեր ևս, որ հաստատում են այն տեսակետը, թե Անանիա Շիրակացին չէր կարող Աշխարհացույցի հեղինակը լինել։

Իտալիան նկարագրելիս Աշխարհացույցի հեղինակը ընդգծել է, որ «Իտալիան ունի երկու մայրաքաղաք՝ հոյակապ Ռավեննա և Մեծ Հռոմ»[42]։ Այդ նշանակում է, որ Աշխարհացույցը գրված է այն ժամանակ, երբ Հռոմը և Ռավեննան միաժամանակ եղել են անկախ մայրաքաղաքներ։ Հռոմեական կայսրության անկումից հետո Հռոմը շարունակել է մնալ որպես հոգևոր իշխանության մայրաքաղաք։ Բյուզանդիան 554 թ. գրավելով Ռավեննան, այն դարձրեց իշխանության երկրորդ մայրաքաղաքը, և «առաջին անգամ էքսարխ տիտղոսը գործածական է դառնում Ռավեննայում... զինվորական նահանգապետների ընդարձակ իրավունքներով, որոնք բիշ-բիշ իրենց են ենթարկում նաև քաղաքական վարչությունը»[43]։ VI դարի երկրորդ կեսում մայրաքաղաք Ռավեննայի էքսարխությանն էին ենթարկվել Վենետիկը, Նեապոլը, Ճենովան ու շրջակա այլ տերիտորիաները։ 568 թ. լանգոբարդները ներխուժեցին Իտալիա և գրավեցին այն, բյուզանդացիների ձեռքին մնաց միայն Ադրիատիկ ծովի մերձափնյա մի փոքրիկ հատվածը՝ Պո գետի գետաբերանից մինչև Անկոնա։ Այսպիսով, Ռավեննան ու Հռոմը որպես երկու մայրաքաղաքներ գոյություն են ունեցել VI դարի վերջերին։ Սրանով ժխտվում է այն հնարավորությունը, որ Աշխարհացույցը գրված լինի Անանիա Շիրակացու կողմից, որն ապրել է VII դարում։

Աշխարհացույցի հեղինակը Այրարատում թվում է «ոստանն դունայ մինչև ցդաշան Շարուր»։ Արցախի շարադրանքում նա հիշատակում է «Սիսական ոստանն», իսկ Աղվանքի գավառները թվարկելիս՝ «ոստանն ի մարծպան»։ Այս տեղեկությունները որոշակի կռվան են մեզ հետաքրքրող խնդիրը պարզաբանելու համար։ Հնում ոստանը եղել է թագավորանիստ, իշխանանիստ մայրաքաղաք։ Աշխարհացույցի «ոստան ի մարծպան» արտահայտությունը պրոֆ. Ք. Պատկանյանը մեկնաբանել է որպես «մարզպանի մայրաքաղաք, նրա շրջանը»։ Այստեղից պետք է եզրակացնել, որ Աշխարհացույցը գրված է մարզպանական ժամանակաշրջանում, որը տևել է մինչև VI դարի վերջերը, բայց ոչ ուշ, քան Հերակլի արշավանքները, որովհետև 622 թ. «Հերակլը հարյուրքսան

---

41 Տարօրինակ է, որ հանհերով շրջապատված խնձորի այս օրինակը Ա. Աբրահամյանը վերագրում է... Շիրակացուն և դրա հիման վրա պնդում, թե Շիրակացին ընդունում է երկրի գնդաձևությունը (տե՛ս Ա. Աբրահամյան, Թորոսնացուն վերագրվող «Աշխարհացույցի» հեղինակի հարցի շուրջը, Երևան, 1940, էջ 69—70)։

42 «Армянская география VII века», էջ 9։

43 Հ. Գելցեր, Համառոտություն բյուզանդական կայսրների պատմության, թարգմ. Տ. Մովսիսյանի, Վաղարշապատ, 1901, էջ 103։

հզար զորքով հարձակվեց Պարսկաստանի վրա և իջնելով Կարին քաղաքը, դրավեց նախ Այրարատի 'ովինը, ավերելով այն, և Նախճավանը»[44]։

Արդյոք վերոհիշյալ տվյալների ամբողջությունը բավական չէ՞ ապացուցելու համար, որ Աշխարհացույցը գծված է եղել 570 և 622 թթ. միջև ընկած ժամանակահատվածում, այսինքն այն ժամանակ, երբ Տիկերագիտության հեղինակ Շիրակացին (610—685 թթ.) 10—12 տարեկան էր և գիտական աշխատության հեղինակ լինել չէր կարող։

* * *

Վերևում շարադրվածի հիման վրա մենք հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Աշխարհացույցը աշխարհի ինքնուրույն մի քարտեզ է եղել, որ չի պահպանվել։ Մեզ հասած տեքստը այդ քարտեզի բացատրագիրն է։

2. Աշխարհացույցի հեղինակը Պտղոմեոսի քարտեզներից չի օգտվել, իսկ նրա աշխատությունների հետ ծանոթացել է համառոտագրված տեքստի միջոցով։

3. Աշխարհացույցի և Տիկերագիտության հեղինակները սկզբունքային հարցերում հակադիր հայացքներ պաշտպանող տարբեր անձնավորություններ են։

4. Բացառված չէ, որ Աշխարհացույցը գծված է եղել 570 և 622 թթ. միջև ընկած տարիներին։

ОБ «АШХАРАЦУЙЦЕ» VII ВЕКА

М. М. ХАЧАТРЯН

(Резюме)

«Ашхарацуйц» (Армянская география VII в.) является оригинальным картографическим произведением, в котором применены классические традиции греческой и римской школы: в целях изображения земной поверхности использована картографическая проекция, внесена система параллелей—климатов, применены сфрагиды по размежеванию территорий, стран и материков. Географические сведения Птолемея, Эратосфена, Страбона и других использованы путем детального обновления, критического разбора и поясняющих замечаний.

Исследователи «Ашхарацуйца» не замечали его картографической направленности и, основываясь лишь на идентичности изложения географических описаний, считали его переводом географии Клавдия Птолемея.

44 Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 159։

Детальное картографическое исследование «Космографии» Анания Ширакаци и «Ашхарацуйца» подтверждает, что указанные произведения не могли принадлежать одному автору, т. к. ряд принципиальных вопросов, в том числе вопросы космографии и картографии, изложен в них с противоположных, взаимно исключающих позиций.